

Մեծայարգ
Տիար Հարրի Չիրբինեան
Ս. Մեսրոպ Հայց. Եկեղեցւոյ
Ժխական Խորհուրդի Ատենապետ
Ռէյսին.

Յարգելի Տիար Չիրբինեան,

Ասացած ենք Փետրուար 11, 1980 թուակիր Եկեղեցւոյդ տեղեկագիրը, որով
կը հաղորդէք թէ Հոգշ. Տ. Վարուժան Ծ. Վրդ. Գապառամեանի նախագահութեամբ
Յունուար 27ին գումարուած համայնքիդ ժխական ժողովին մէջ կատարուած է
Ժխական Խորհուրդի երեք անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով բուէար-
կութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ժխական Խորհուրդի նորընտիր անդամները՝
ըստ ստորեւ տրուած ցանկին: Համաձայն Թեմական Կանոնադրութեան՝ մեր վա-
ւերացումէն ետք է որ կը կազմուի ժխական Խորհուրդի դիւանը:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել ժխական Խորհուրդի նորընտիր դիւանի
անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ժխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք յաջող եւ արդիւնա-
ւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգե-
ւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԿՈԳՈՍ
Առաջնորդ

Դաւիթ Ազարեան
Արթըր Մըսրըլեան
Փիթըր Բազարեան